



ՀԱՄԱԹԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՆԳՐԵՍՈՒ

ՔՈՆԿՐԵՍԻ ԴԻՄՈՒՍԸ ՄԻԱՑՅԱԼ ԱԶԳԵՐՈՒՆ

Համաշխարհային Հայկական Քոնկրեսը հուշագրով մը դիմեց Միացյալ Ազգերուն, առաջարկելով ազատագրել և Հայկական Սովետական Հայաստանին վերադարձնել՝ Ուիլսոնի սահմանագծած հայապատկան հողամասը: Հուշագիրը պատրաստված է հայերեն և անգլերեն բնագրերով և երկու բնագիրներն ալ ընդունվեցան միաձայնօրյաւր և երկարատև օվսանճանհրով:

Հետեւյալը Համաշխարհային Հայկական Քոնկրեսի Միացյալ Ազգերուն կատարած դիմումնագրի հայերեն բնագիրն է.

Աշխարհի շատ մը երկրներն և Միացյալ Նահանգներու ամեն մասերն հայ ժողովրդի ներկայացուցիչներ, թվով 700, գումարելով Հայկական Համաշխարհային Քոնկրեսը Նյու-Յորքի Ուալտոթֆ Աստորիա պանդոկին մեջ, ապրիլ 30-էն մայիս 4, 1947, միաձայն որոշումով կդիմենք Միացյալ Ազգերու արդարակորով դատարանին, ի խնդիր վերջնական և ճիշտ լուծման հայկական հողային պահանջներու, հիմնավորված պատմական իրավունքներով և հանդիսավոր դաշնագրերով:

Հանրաժանութ և անվիճելի իրողութիւնն է, որ Հայկական Հարցը միջազգայնորեն ճանաչվեցաւ Պերլինի Վեհաժողովին (1878-ին) և վերջնականապէս վճռվեցաւ Սևրի դաշնագրով (1920-ին) հայկական պետութեան մը ստեղծման որոշմամբ, որուն սահմանները ճշտվեցան և գծվեցան երջանկահիշատակ նախադահ Ուոտսոն Ուիլսոնի կողմէն, Դաշնակից Գերագոյն Խորհուրդի խնդրանքով, և Հայոց այս իրավունքները ավելի զորացան Ատլանտյան Հրովարտակի հռչակած վսեմ սկզբունքներով:

Երկրագնդային երկու թախումներու մեջ հայ ժողովուրդը կողմնորոշվեցաւ Դաշնակիցներու և անոնց զինակիցներուն հետ, գիտակցելով, որ այդ պայքարները կմղեն ռամկավարութեան և տեղեկերական արդարութեան համար: Համաշխարհային առաջին և երկրորդ պատերազմներու ընթացքին հայ ժողովուրդը Դաշնակից բանակներուն տվաւ

մոտավորապէս կես միլիոն զինվորներ և կամավորներ, որոնցմէ շատերը ինքզինքնին պանծացուցին հերոսական քաջագործութիւններով, մինչդեռ թուրքերը պործոն մասնակիցներն էին շար ուժերու համաշխարհային առաջին պատերազմին, որոնց նպատակն էր ոչնչացնել բարոյականութեան և մարդկային ազատութեանց բարձր սկզբունքները, իսկ համաշխարհային երկրորդ պատերազմի միջոցին թուրքերը զաղտնապէս օգնեցին նացիներուն՝ իբրև բարյացակամ շեղոք:

Համաշխարհային առաջին պատերազմին հայերու ենթարկված կազմակերպված ջարդերու և ցեղասպանական բռնազաւթի պատմութիւնը իր հավասարը չունի մարդկային ցեղի տարեգրութեանց մեջ: Երկուք ու կես միլիոն հայեր անդթորեն քշվեցան իրենց տուններէն դեպի Սուրիայի և Միջագետքի անապատները: Այդ հսկա զանգվածին մեկ ու կիս միլիոն հոգի կորսվեցան իբր հետեւանք ջարդերու, սովամահութեան, առևանգումի և բազմաթիւ արկածներու: Փշացան մեր եկեղեցական, կրթական և մշակութային անվորաբերները, դարաւոր գանձերը: Եւ միմիայն անհատական և հավաքական բռնագրավված նյութական հարստութեանց հանրագումարը կհասնի երկիւրոնավոր տոլարներու:

Ապրելու կամքը սակայն հաղթանակեց, և հայ ցեղի բնկորները 1920-ին ողջունեցին հաստատումը Հայկական Սովետական Հանրապետութեան, պատմական Հայաստանի

մեկ տասներորդ և Ուիլսոնի սահմանագծած երկրամասի մեկ չորրորդ մասին վրա: Իր հայրենիքի ապահով մեկ փոքր մասին մեջ հաստատված՝ Հայաստանի աշխատասեր և ազատասեր ժողովուրդը, լծվելով վերաշինական աշխատանքի, ապացույցը տվավ իր ստեղծագործական ոգիին, և հաջորդող տարիներու միջոցին՝ հառաջդիմեց արդյունաբերությանը, ծաղկեցավ երկրագործական տնտեսականին, և հրաշալի նվաճումներ արձանագրեց մշակութային մարդի մեջ: Այսպիսի փայլուն իրականություն մը և պայծառ ապագա մը իր աչքին առջև, Հայաստանի ժողովուրդը սկսավ ուվելի վառ հույսով նայիլ զեպի գալիքը և փորձեց ազդու միջոցներ օգտագործել վերջնական հայրենադարձի համար իր այն ազգակիցներուն, որոնք իբր արդյունք անգույթ թրջական բռնազաղծի, ցրված են աշխարհի չորս ծագերը և որոնցմե շատերը երեսուն տարիե ի վեր տարագրության մեջ կապրին՝ մատնված հուսահատության և դուրկ կյանքի տարրական կարիքներին և մարդկային իրավունքներին:

Թրջական բարբարոսության այս աստանդական զոհերու թիվը կհասնի մոտավորապես մեկ ու կես միլիոնի: Անոնց իրենց հայ-

րենական տունը վերադառնալու հավերժական փափաքը ամբողջովին չի կրնար իրականացվիլ, մինչև որ Հայոց հողային պահանջները ճիշտ լուծում չգտնեն:

Հայկական Սովետական Հանրապետության հողային սահմանափակությունը արգելք կհանդիսանա տարագիր հայության հայրենադարձին և երկրի հետագա զարգացման:

Հետևաբար, հիմնված վերև հակիրճ կերպով ներկայացված տվյալներուն վրա, որոնք վավերացված են պատմական փաստաթուղթերով և հանդիսավոր դաշնագրերով, Համաշխարհային Հայկական Քոնկրեսը, հանուն աշխարհի բոլոր հայերուն, հարգանք կխնդրե Գերագույն Մարմնեդ՝ Հայոց հողային պահանջները դնել Միացյալ Ազգերու օրակարգին վրա և արդար ու հաստատակամ վճռով մը՝ ազատագրել տակավին թրջական լուծին տակ գտնվող Ուիլսոնի սահմանագծած Հայապատկան երկրամասը, և վերադարձնել զայն իր օրինավոր տիրոջ՝ Հայկական Հանրապետության:

Մարդկությունը և արդարությունը կպահանջեն այս իրավացի պահանջի իրագործումը ձեր վսեմ ատյանին:

Համաշխարհային Հայկական Քոնկրեսի Դիվան

(«Ժողովուրդ», հունիս 13, 1947 թ.)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔՈՆԿՐԵՍԻ ԴԻՄՈՒՆԱԳԻՐԸ ԿՆԵՐԿԱՅՍՑՎԻ ՄԻԱՑՅԱԼ ԱԶԳԵՐՈՒՆ

Հունիս 5-ին, հինգշաբթի օր, Առաջնորդ Տ. Տիրան Նպիսկոպոսի գլխավորությամբ երեք հոգիների պատգամավորություն մը Միացյալ Ազգերու Քարտուղարության ներկայացուց Համաշխարհային Հայկական Քոնկրեսի Դիմումագիրը, որով կառաջարկվի Հայոց հողային պահանջը դնել Միացյալ Ազգերու օրակարգին վրա, և արդար ու հաստատակամ վճռով մը, Ուիլսոնի սահմանագծած Հայապատկան հողամասը միացնել Հայկական Սովետական Հանրապետության:

Պատգամավորության մյուս անդամներն էին՝ վերապատվելի Մ. Թ. Գալաճյան և Ազգային խորհուրդի Տնօրեն Պետրոս Թերլյան:

Քարտուղար Թրիկլի Լին Նվրոպա զացած ըլլալով, պատգամավորությունն ընդունեց անոր տեղակալներին մեկը՝ Տոքսոթ Փրոտիշ, յուզույալ: Տեսակցությունը տեղեց կես ժամ:

Պատգամավորությունը Տոքսոթ Փրոտիշին հանձնեց Համաշխարհային Հայկական Քոնկրեսի Դիմումագիրը Միացյալ Ազգերուն, Արտաքին Գործոց Նախարարներու խորհուրդին մատուցված Ազգային խորհուրդի Հուշագրի պատճենը և մեկ օրինակ «Արմինիա Ռիպորն» գիրքին, որ Ազգային խորհուրդի հրատարակությունն է:

(«Լրաբեր», հունիս 7, 1947 թ.)

ՀԱՍՏԵՍԱՐՀԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔՈՆԿՐԵՍԻ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՀԱՆՁՆՎԻ ՄԻԱՑՅԱԼ

ԱԶԳԵՐՈՒ ԵՎ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՋՆԵՐՈՒՆ

Կանխօրոք եղած ժամադրության համաձայն հունիս 5-ի առավոտուն Միացյալ Ազգաց Քարտուղարության ներկայացուցիչ

Տոքս. Փրոտիշի հանձնվեցավ Համաշխարհային Հայկական Քոնկրեսի այն որոշումագիրը, որ կպահանջե Ուիլսոնի գծած Հա-

յաստանի սահմաններուն որոշումին գործադրությունը: Ներկայացված սույն որոշումնագրին լման պատճենը արդեն երեքշաբթի մամուլին մեջ Համաշխարհային Հայկական Քոնկրետի վերաբերմամբ:

Պատվիրակությունը կազմավորված էր Սյունիքի Սիրան Սարգսյանի, որ պատվո՞ւն նախագահն էր Հայկական Քոնկրետին և որուն կընկերակցեին Վեր. Մ. Գալստյանը քարտուղարը և Պետրոս Կ. Թերզյանը՝ տնօրենը Քոնկրետին: Այս մատուցված որոշումնագիրը մաս պիտի կազմէ Հայկական հարցի պաշտոնական թուղթերուն: Ըստ Միացյալ Ազգերու Չարթրին, ունէ նյութ օրակարգի հարց կազմելու համար պետք է առաջարկվի Միացյալ Ազգաց անդամ երկու կառավարության մը կողմէն: Այս այցելության տեղեկագրությունը երեքշաբթի «Նյու-Յորք Թայմզ»-ի հունիս 6-ի թվով:

Հունիս 6-ին սույն պատվիրակությունը կանխորոշ եղած կարգադրությամբ, ընդունվեցավ նաև Ամերիկայի Միացյալ Ազգաց ներկայացուցիչ Ուորրեն Օսթլինի ներկայացուցչին կողմէ, որուն մատուցվեցավ որոշումնագրին մէկ պատճենը:

Այս այցելությունը շարունակություն է մայիս 12-ի պատվիրակության, որ այցելեց Ուաշինգթոնի Արտաքին Գործոց Նախարարի տեղակալ Էյսլինին:

Այս երկրորդ այցելության ընթացքին նաև տրվեցավ օրինակ մը այն նամակն, որ Համաշխարհային Հայկական Քոնկրետի վարչությունը ստացած էր Միացյալ Ազգաց քարտուղարի՝ Գրիլլի Լիի գրասենյակէն, որուն մեջ կհանձնարարվէր դիմել Ամերիկայի ներկայացուցչին՝ մասնավորապէս նախաձեռնելու որոշումնագիրը Միացյալ Ազգաց օրակարգի վրա դնելու հարցը:

Այս այցելությունը, որ գրեթէ մամ մը տևեց, եղավ շատ սիրալիկ և հարգելի ներկայացուցիչը ուշի ուշով լսեց և քարտեզի վրա հետեւեցավ Ուիլսոնի գծած սահմաններու և ներկա Հայաստանի սահմաններու հարաբերություններուն: Ամերիկա խոստացավ անմիջապէս խնդիրը Ուաշինգթոնի Արտաքին Գործոց Նախարարության ուսումնասիրության ենթարկել և մեզ տեղեկացնել մեր կառավարության դիրքը այս հարցին վերաբերմամբ:

Այս երկու այցելություններու տուրիվ հանձնվեցան պատվիրակության կողմէ խոստացուած պատրաստված ներածական նամակներ, Մոսկվա, մարտ 1947-ին գումարված Արտաքին Գործոց Նախարարներու ժողովին Ազգային Խորհուրդի մատուցած հուշագրին օրինակներ և երկու հատ «Վերածննդ Հայաստան» գրքին, Տիրան Մրբազանի ներածական ստորագրությամբ, իրր հիշատակ մեր այցելության:

Տնտես. ՊԵՏՐՈՍ Կ. ԹԵՐԶՅԱՆ

10 հունիս 1947

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՔՈՆԿՐԵՏԸ ՊԱՆԾԱԼԻ ՄԵԿ ԷՋԸ ՍՓՅՈՒՌՔԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

(Պաշտոնական տեղեկագրություն)

Համաշխարհային Հայկական Քոնկրետը այլևս կկազմէ պանծալի էջ մը Սիյուրթի հայության պատմության մեջ: Ամերիկահայ Ազգային Խորհուրդի նախաձեռնությամբ սարքված այս մեծ հավաքույթը, իր տեսակին մեջ իբր պատմական և եզակի դեպք մը, պատկերացավ մեծ հաջողությամբ, գերադասեցելով ամեն տեղեկություն:

Առաջին անգամն էր, որ այսքան հսկա և խկապես ներկայացուցչական համաժողով մը տեղի կունենար հայոց մեջ: Երբ նկատի առնվի երթնեկության դժվարությունները և արտասահմանի հայ դաշուքներու տնտեսական աննպաստ պարագաները, խկապես հանդուգն և խիզախ գործ մը նախաձեռնած էր Ամերիկահայ Ազգային Խորհուրդը:

Ջարմանալի էր, որ գտնվեցան կարևոր անհատներ, որ խորհուրդ տվին հետաձգել Համաշխարհային Քոնկրետը: Նկատելով հանկարծական վատթարացումը Միացյալ Նահանգաց և Խորհրդային Միության հարաբերություններուն, և աննպաստ քաղաքական պայմանները՝ իրեն արդյունք Բուրքին հանդէպ Ամերիկայի բռնած բարեկամական դիրքին, վախ հայտնվեցավ թե մի գուցե ներկա պարագաներու տակ, այս տեսակ հայկական ձեռնարկ մը անախորժ թլի Ամերիկայի կառավարության և հարկության առջև վնաս բերէ մեր դատին:

Ուրախ ենք ըսելու, սակայն, որ Քոնկրետը

Հանդիսացավ անհավանական հաջողություն մը ամեն տեսակետե, և նույնիսկ ամենին թերահավատները սիրահոծաբար խոստովանեցան, թե իրենց գուշակությունները և վստահութիւնը էին: Այսօր ալեւս բացարձակ է, որ Համաշխարհային Քոնկրետը սարքաված էր ճիշտ հոգեբանական ժամանակին, և պատեհ առիթ մը ընծայեց ամերիկեան հանրային կարծիքը մշակելու ի նպատակ հայ դատին, նույնպէս Քոնկրետի միջոցով կտրելի

դարձավ ամերիկեան կառավարության պաշտոնապէս և ազդուորեն հիշեցնել, թե ինքը բրած է հանձնառություններ հայոց հանդեպ, և թե հայոց հուշալին պահանջները, հիմքն ունենալով նախագահ Ուիլսոնի որոշումները այժմեական միջազգային հարց մըն է, որուն լուծումը կարեւոր է տեական խաղաղություն հաստատելու համար Մերձավոր Արեւելքի մեջ, քանի որ այդ երկրամասն մասնավոր շահագրգռության առարկա դարձած է ամերիկեան կառավարության համար:

ՃԱՇԿԵՐՈՒՅԹԸ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԺՈՂՈՎՐ

Ապրիլ 30-ի իրիկեան Ուաշտոնթի Ասիորիայի փառավոր ճաշկերույթի մասին բոլոր հայ թերթերն ալ գրեցին ժառանգաւոր սկարաբոյություններ: Այս ճաշկերույթը, որ 900-է ալելի անձինք ներկա էին, թե իր 28-քեղովյամբ, թե իր քաղաքովյամբ և թե իր քաղաքական և պատմական հանդամանքով ամենին նշանակելի մեկ հավաքույթն է մեր ժամանակակից հայ պատմություն: Հոն հայ դատի ի նպատակ գործալոր կերպով պատահալովեցան մեր ամերիկացի բարեկամներին Չարլս Թոպի—Նյու Հեմշիրի ծերակուտական, Տոքսոն Բեյմընտ Ուաշ— բատիոյի նշանավոր վերծանող և էստիմ Սմիթ— Հայ Իրավանց Ամերիկեան Հանձնախումբի ատենապետ: Ինչպէս նաև Ամերիկահայ Առաջնորդ Տիրան Եպիսկոպոս Ներսիսյան, գործավար Հակոբ Շեքերճյան, փրոֆեսոր Հարություն Տաուրյան, և Նշան Շահինյան— ատենապետ Ամերիկահայ Ազգային Խորհուրդի, և արտասահմանի ու Ամերիկայի կարգ մը պատգամավորներ:

Մայիս 4-ի Քալիֆոռնիայի հայոց Գրադարակային ժողովը եղավ նույնքան ներշնչող և պատմական հավաքույթ մը ամերիկահայ տարեգրությանց մեջ: 2,700-ի ալելի խուռն բազմություն մը լիցված էր հսկա ժողովասրահ, որոնց մեջ էին 700-ի ալելի արտասահմանի և ամերիկահայ պատգամավորներ: Ամերիկայի մեր ազդեցիկ բարեկամներին վեր. Բապըրտ Սըրը, Ամերիկեան Եկեղեցիներու Հայոց ի նպատակ կազմված Հանձնախումբի ատենապետը, Տոքսոն Ֆրերեն Բինկարն — բատիոյի նշանավոր վերծանող, Մամբրե Արքեպիսկոպոս Գալֆայան՝ Ամենայն Հայոց Հայրապետի ներկայացուցիչը, Նշան Շահինյան, գնդապետ Մարգիս Գարդարյան, Ավետիս Տերտնյան և ուրիշներ: Կարճ միջոցի մը մեջ գոյացավ 33.000 տոլարե ալելի գումար մը հայ դատի ի նպատակ:

Ժողովին ամենին հուզիչ մասն էր, երբ

առիկին էլնոր Ուիլսոն Մերքուտ, հայոց ջերմ բարեկամ նախագահ Ուիլսոնի պատրուք, բնմին վրա երեցավ և կարճ ուղերձ մը քննով ոգեկոշելով իր հայրը և անոր խաղաղաշատությունը և հայոց հանդեպ տածած իր մասնավոր համակրանքը:

Այդ պատմական սրահը քիչ անգամ հանդիսատես եղած է այսքան խանդավառ և անզուսպ հայրենասիրությամբ լիցված ներշնչող ժողովի մը, որը շարունակ վառ պիտի մնա ներկաներու հիշողության մեջ:

Հայկական Քոնկրետի մեկ համառոտ, բայց ամբողջական, տեղեկատվությունը, որ պիտի բաղկանա մոտավերապէս 40 էջերե, արդեն մամլո տակ է և քիչ ատենին լույս պիտի տեսնու: Ծրագիր կա նաև հրատարակելու ալելի մեծ և մանրամասն հատոր մը, այս պատմական համաժողովին կարեւոր ատենախոսություններով և պատկերներով, մտավոր ապագային: Մինչև ասոնց լույս տեսնելը հայ ժողովրդին տեղեկություն մը տված ըլլալու համար, կուտանք վիճակագրական ամփոփումը, որ թվանշաններով կցուցնէ ժողովուրդին մեջ արթնացած հետաքրքրությունը և դանդաժային մասնակցությունը այս Քոնկրետին, ինչպէս նաև անոր որքան ներկայացուցչական ըլլալու հանգամանքը:

ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹԻՎԸ

715

Ներկա եղող կազմակերպություններու թիվը

70

Ներկայացված երկիրներու թիվը

22

Արտասահմանը ներկայացնողներու թիվը

62

Արտասահմանեկող պատգամավորներու թիվը

26

Արտասահմանը ներկայացնող Ամերիկայի պատգամավորներու թիվը

36

Միացյալ Նահանգներու ներկայաց- ված քաղաքներ	76	Կանադաց Միություններու պատգա- մավորներու թիվը	37
Ազգային հորհուրդի երեք կազմա- կերպություններու պատվի- րակներ	262	Երիտասարդական Միություններու պատգամավորներու թիվը	48
Ազգային հորհուրդի երեք կազ- մակերպություններու մասնա- նյութերու թիվը	148	Դադուրները ներկայացնող պատ- գամավորներու թիվը	34
Հայրենակցականներե եկած պատ- գամավորներու թիվը	219	Մասնավոր հրավերով պատգամա- վորներու թիվը	33
Հայրենակցական Կեդրոնական մարմիններու թիվը	46	Հ. Բ. Ը. Մ. մասնաճյուղերե ընտ- րված պատգամավորներու թիվը	11
Հայրենակցական Մասնաճյուղերու թիվը	117	Հ. Բ. Ը. Մ. ներկայացուցած պատ- գամավորներու թիվը	9
Առաքելական և Ավետարանական եկեղեցիներու պատգամավոր- ներու թիվը	60	Հաշկերույթին ներկա եղողներու թիվը	900
Ներկայացված եկեղեցիներու թիվը	31	Քոնկրետի ժողովներուն ներկա ե- ղողներու միջին թիվը	1000
		Քարենկի Հոլի ժողովին ներկա ե- ղողներու թիվը	2700

ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒ ԱՄՓՈՓՈՒՄ

1. Ներկա եղած և մասնակցած են այս համագումարին Հայ Առաքելական Եկեղեցի-
վո Արևելյան, Քաղիֆոռնիո և Միջին Նա-
հանգներու թիմերու առաջնորդները իրենց
Կեդրոնական Վարչություններով և բոլոր
բարձրաստիճան եկեղեցականներով, ինչպես
նաև թեմերու կղերով և անոնց հոգաբարձա-
կան ներկայացուցիչներով:

2. Հայ Ավետարանական Միությունը իր
Վարչությունով և շատ մը եկեղեցիներու հո-
լիվներով և հոգաբարձություններով:

3. Ազգային հորհուրդը կազմող երեք կազ-
մակերպությանց վարչությունները, իրենց
բոլոր մասնաճյուղերով:

4. 46 Հայրենակցական Կեդրոնական Վար-
չություններ իրենց 117 մասնաճյուղերով:

5. Հ. Բ. Ը. Միություն 11 մասնաճյուղեր:

6. 10 այլ և այլ կազմակերպություններ,
կրթական, լեզուական, կանանց, երիտա-
սարդաց, մտավորական, և օժանդակ կազ-
մակերպություններ իրենց պատվիրակներով:

7. Շատ մը քաղաքներ ներկայացված են
մասնավոր ընտրված պատգամավորներով:

8. Մասնավոր հրավերով ներկա եղած և
մասնակցած են քոնկրետին ականավոր ազ-
գային ղեմերը, մտավորականներ, առևտրա-
կաններ, եկեղեցականներ, բժիշկներ, փա-
տաբաններ, թերթերու թղթակիցներ, հրա-
պարակադիրներ և արվեստագետներ:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՔՈՆԿՐԵՏԻ ՄՏԱՑԱԾ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ- ԹՅՈՒՆԸ

Քանի մը քր առաջ ստացանք Վեհափառ
Հայրապետի Սրբատառ Կոնդակը՝ ուղղված
Համաշխարհային Հայկական Քոնկրետին,
որը ամբողջությամբ լույս պիտի տեսնե հայ
մամուլի մեջ կարճատև են:

Հայաստանին եկած հեռագրերն են արդեն
երկայան հայ մամուլի մեջ: Անկե զատ

շնորհավորական և քաջալերական հեռագրի-
րներ և պատգամներ ստացված են այս առ-
թիվ հետևյալ երկրներե և անձնավորու-
թյուններե, որ դրական ապացույց են այս
համագումարին վայելած ժողովրդականու-
թյան և անոր ներկայացուցչական հանգա-
մանքին:

ԱՐՏԱՍՍՀՄԱՆԻ ԵԿԵԼԵՑԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԵ

Գարեգին Ա Կաթողիկոս Մեծի Տանն Կիլի-
կիո:
Կյուրեղ Ա Պատրիարք Երուսաղեմի:
Առաքվազ Արեմպիսկոպոս Սուրմեյան—
Կաթողիկոսական Պատվիրակ Եվրոպայի,
Շեռնիֆ Վարդապետ Գալուստյան— հովիվ

Լոնտոնի Ս. Սարգիս եկեղեցվո:
Վազգեն Վարդապետ— Առաջնորդական
Փոխանորդ Ռումանիո:
Գարեգին Արեմպիսկոպոս— Կաթողիկո-
սական Պատվիրակ Հարավային Ամերիկա-
հայոց:

ՊԱԼՔԱՆԵՐԵՆ, ԵՎՐՈՊԱՅՆ ԵՎ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԵՆ

Յրանա—Փարիզին՝ Ա. Ասատուրյան, դա-
ղութի կողմանին:

Ռուսաճիա—Պուրբեշեն՝ Դանիելյան և տո-
տոս Թիրատյան, եկեղեցվո հոգաբարձու-
թյան կողմանին:

Պաղեստին—Հայֆային՝ ձորն Կարապետ-
յան, Հառաջդիմական Միության կողմանին,
Հակոբ Մարտիրոսյան, խմբագիր «Միու-
թիւն» թերթի:

Եգիպտոս—Դահիբեին՝ Ա. Սարուխան,
Օհաննեսյան, Ազգային Խորհրդի կողմանին:
Կիպրոս—Նիկոսիա՝ Տեովեթյան, Օ. Վե-
ֆիլյան, Հայ Բարեկամներու Միություն:

Եգիպտոս—Ազեքսանդրիային՝ Խալեյան,
Ազգային Խորհրդի կողմանին:

Պուկարիա—Սոֆիային՝ Դաբրիել Դաբ-
րիելյան, Ընդհանուր պատգամավոր:

Սուրիա—Հալեպին՝ Տոփուր Խաչատրյան,
Ազգային Խորհրդի կողմանին:

ԱՐԵՎՄՏՅԱՆ ԿԻՍԱԳՈՒՆԴԵՆ ԵՎ ԽԱՂԱՂԱԿԱՆ ԿՂԶՆԵՐԵՆ

Պրագիլ—Սան Փափլո՝ «Հայաստանի Ձայն»,
Տրչ Ինտիգ կղզիներեն—Պաթավիայի Հայոց
եկեղեցվո հոգաբարձուներեն:

Ուրուկվային—Մոնթեվիտոյի Ազգային
Խորհուրդին:

Քուպա—Հավանային՝ ընտրված պատ-
գամավորներ Հակոբ Յաղճյան, Կարապետ
Աղոյան, Մուշեղ Թերզյան:

Քուպա—Հավանային՝ Հայ Հառաջդիմա-
կան Միությանին:

Արժանքին—Պուենոս Այրեսին՝ Հաճու
Երիտասարդաց Միություն, Հայ Երիտասար-
դաց Կեդրոն, «Հայ մամուլ», Բուխարիո Միու-
թենին:

Միացյալ Նահանգներու ամեն կողմերին
այլ և այլ անհատներ և կազմակերպու-
թյուններին ստացած ենք 25-ի ավելի շնոր-
հավորական հեռագրեր:

Իսկ հետևյալ ականավոր անձներին ստա-
ցած ենք գրավոր շնորհավորականներ և
մաղթանքներ.—

Հ. Բ. Ը. Մ. Կեդրոնական Վարչություն.
Ռուբեն Մամուլյան

Առն Սյուրմեյան

Էմանուել Կարանդյան

Ֆարիել Քուրի, Մուրիո Միացյալ Ազգաց
ներկայացուցիչ:

Էտուարտ Խորրա, Լիբանանի Հյուպատոսի
տեղակալ:

Էռնեստ Բոգուատովաֆի, Փոլանտայի
Հյուպատոս:

Մեքս ուէպր

Բեյմընտ Կրեմս Սուիսկ, ռատիոյի հռչա-
կավոր խոսող:

Մար Էսաի Շիմուն, ասորիներու Կաթողի-
կոս և Պատրիարք Արևելքի:

Փոլ Տոսըն Էսի, նախագահ Ատելֆի գո-
ւեհի:

Ֆիորելլո Լա Կուարտիա, նախկին քաղա-
քապետ Նյու Յորքի:

Ա. ձ. Սեպեր, Քոնկրեսմեն:

Սենեքր Բլոտ Փեյսիբր

Սենեքր Ի. Ս. ձանսրն

Սենեքր Ա. Սմիթն

Սենեքր Ն. Ա. Լաճ

Սենեքր Ի. Մ. Այվզ:

